ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028»

ք. Երևան 20.12. 2013թ.

ՀՀ Ազգային ժողովը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Դումանյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Գզրարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված <<Մարդատար ավտոմեքենա>> /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

Ավտոմեքենաների ձեռքբերման հիմք է հանդիսանում՝ ՀՀ Կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի N 1421-Ն որոշումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 43 150 000 (քառասուներեք միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի 33 150 000 գումարի պարտավորությունները կստանձնվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2013թ. դեկտեմբերի 28-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 43150000ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան Պայմանագրի գինն է՝ Ապրանքի մատակարարման մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի:

9.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Աժ աշխատակազմ	***<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ***
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	***ք. Երևան, Բայրոնի 3***
ՀՎՀՀ 00008519	***<<Ամերիաբանկ>> ՓԲԸ***
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	***Հ/Հ 1570003667300100***
Հ/Հ 900011020089	***ՀՎՀՀ 01557589***
ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար	***Վ. Գզրարյան***
Գ. Դումանյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
20.12. 2013թ. կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին I

Տոյոտա Լենդ Քրաուզեր

309 ձիաուժ 4.6L բենզ., 8-գլան/32 փական Dual VVT-i շարժիչ
6-աստիճան ավտոմատ փոխանցումատուփ (Tiptronic)
Միջլիսեռային դիֆերենցիալի բլոկավորում
7 նստելատեղ (ներառյալ վարորդինը)
Չափսերն ու քաշը
Երկ./լայն./բարձր.՝ 4950/1970/1950 մմ
Քաշը (առավել.)՝ 3350 կգ
Ճանապարհային լուսածերպը՝ 240 մմ
Բեռնախցիկի չափսերը՝ 1720x1670 մմ
Կոմպլեկտավորումը
Multi-terrain ABS (Արգելակների ապաբլոկավորման համակարգ)
VSC (կուրսային կայունության համակարգ)
EBD (արգելակման ուժերի բաշխման էլեկտրոնային համակարգ)
BAS (շտապ արգելակման ուժեղարար)
A-TRC (ակտիվ հակատեղապտուտային համակարգ)
Crawl Control (օժանդակ համակարգ ճանապարհներից դուրս երթևեկելու համար)
KDSS (թափքի կայունացման էլեկտրոնային համակարգ)
9 անվտանգության բարձիկ
4-գոտի climat-control՝ ջերմաստիճանի առանձնացված կարգավորումով
Լրիվ էլեկտրափաթեթ (բոլոր ապակիների և հայելիների էլ. կառավարում)
Կենտրոնական փական
Սրահի ձևավորումը՝ փայտ և կաշի
Ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ ղեկանիվ
Նստելատեղերի տաքացում/սառեցում/էլ. կարգավորում՝ հիշողության ռեժիմներով
Սառնարան
Cruise-control

Սենսորային դիսփլեյ կենտրոնական վահանակի վրա (EMV) չորս տեսադարձային խցիկներով

DVD-նվագարկիչ (6DVD changer)+JBL աուդիոհամակարգ 9 բարձրախոսներով

Hands-free, Bluetooth, USB, AUX մուտքեր

Շարժիչի մեկնարկումը "Start-stop" կոճակի օգնությամբ

Չորս տեսախցիկ+ առջևի և հետևի կայանման սենսորներ (Parktronic)

Լյուկ՝ էլեկտրական կառավարմամբ

Առջևի հակամշուշային լապտերներ

Լույսի և անձրևի սենսորներ

Առջևի և հետևի պնևմատիկ կախոցներ

Թեթևաձույլ 285/60 R18 չափսի անվադողեր

3 ՏԱՐԻ ԿԱՄ 100.000 ԿՄ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	*<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ*
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	*ք. Երևան, Բայրոնի 3*
ՀՎՀՀ 00008519	*<<Ամերիաբանկ>> ՓԲԸ*
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	*Հ/Հ 1570003667300100*
Հ/Հ 900011020089	*ՀՎՀՀ 01557589*
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար	*Վ. Գզրարյան*
Գ. Դումանյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
20.12. 2013թ. կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2013թ.										2014թ.
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը		
				քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին	գին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Մարդատար ավտոմեքենա	հատ	43150000							1	10000.0	1	**10000.0**	**33 150.0**
Ընդամենը														

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
Գ. Դումանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի 3
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700036673001 00
ՀՎՀՀ 01557589
Վ. Գզարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
20.12. 2013թ. կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028
ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

հազ. դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2013թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Մարդատար ավտոմեքենա												**10000.0**	**10000.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
Գ. Դումանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի 3
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
Վ. Գզարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 4
<< 20>> <<12>> 2013թ. կնքված
N << ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028
ծածկագրով գնման պայմանագրի

Վաճառող	Գնորդ
	ՀՀ ԱԺ աշխատակազմ
	ք.Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
հ/հ	հ/հ 900011020089 Երևանի թիվ 1 ՏԳԲ.
	հվհհ 00008519
հվհհ	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն՝ ի դեմս ..... և Կատարողը՝ ի դեմս .....ի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2014 թվականի N 750-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1414-Ն որոշման NN 5, 11 և 12 հավելվածներում կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին 2014 թվականին հատկացնել 55,033.0 հազ. դրամ, որից՝ 54,650.0 հազ. դրամն ինն ամսում, այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝

1) «Վարչական սարքավորումներ» հոդվածով՝ 21,883.0 հազ. դրամ, որից՝ 21,500.0 դրամն ինն ամսում.

2) «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով՝ 33,150.0 հազ. դրամ, որից՝ 33,150.0 դրամն ինն ամսում:

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետով հատկացված միջոցներից 33,150.0 հազ. դրամն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2013 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028 պայմանագրի շրջանակներում «Toyota Land Cruiser» մակնիշի 4.6 լիտր շարժիչի աշխատանքային ծավալով ավտոմեքենայի դիմաց վճարում կատարելուն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ — Հ. Աբրահամյան

2014 թ. օգոստոսի 1
Երևան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

20.12.13թ. կնքված ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 20.08. 2014թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և <<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Գզրարյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 20.12.13թ. կնքված ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028 պետական գնման պայմանագրի 9.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1.1 ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 24-ի թիվ 750-Ն որոշման 3-րդ կետի և N2 հավելվածի համաձայն՝ հաստատել պայմանագրի 4.1.1 կետով նախատեսված ֆինանսական պարտավորությունների գործընթացը,

1.2 Պայմանագրի N2 և N3 հավելվածների համաձայն՝ հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն համաձայնագրի հավելված N1-ի:

1.3 Պայմանագիրը գործում է մինչև 25. 12. 2014թ.

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	***<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ***
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	***ք. Երևան, Բայրոնի 3***
ՀՎՀՀ 00008519	***<<Ամերիաբանկ>> ՓԲԸ***
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	***Հ/Հ 1570003667300100***
Հ/Հ 900011020089	***ՀՎՀՀ 01557589***
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար	***Վ. Գզրարյան***
Հ. Թովմասյան	
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
20.12.13թ. կնքված N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԱՊՁԲ-028
պետականգ նման պայմանագրի
20.08.2014թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

Ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Նախատեսվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 24-ի թիվ 750-Ն որոշմամբ՝ 11.01.01.01 ծրագրով ֆինանսական միջոցների հաշվին, ընդ որում՝												
	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Մարդատար ավտոմեքենա								33150.0	33150.0	33150.0	33150.0	33150.0	33150.0

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար
Հ. Թովմասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՐՈՂ
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի 3
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
Վ. Գզոարյան

/ստորագրություն/
Կ.Տ